600.0193.24.06.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2015 թվականի №193Ա

ք. Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0003 ԵՎ №0014 ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը և հաշվի առնելով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի հունիսի 8-ի №323 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի հունիսի 10-ի №8 որոշման 3-րդ կետով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության №0003 և ջերմային էներգիայի արտադրության գործունեության №0014 լիցենզիաները:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հոկտեմբերի 15-ի «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի պահուստում գտնվող սարքավորումների և ներկայանային տեխնոլոգիական ենթակառուցվածքների վրա էլեկտրական և ջերմային էներգիայի նորմատիվային ծախսերի հաշվարկի մեթոդիկան հաստատելու մասին» №68Ա որոշումը,

2) Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հոկտեմբերի 15-ի «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ոչ բլոկային մասի մեկ կաթսա, մեկ տուրբին աշխատելու պայմաններում վառելիքի տեսակարար ծախսի ելակետանորմատիվային բնութագրերը և հաշվարկի մեթոդիկան հաստատելու մասին» №69Ա որոշումը,

3) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի հունիսի 4-ի «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական

ընկերության №0003 և №0014 լիցենզիաների գործողության ժամկետները երկարաձգելու մասին» №72Ա որոշումը,

4) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հունիսի 3-ի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության №0003 և №0014 լիցենզիաների գործողության ժամկետները երկարաձգելու մասին» №261Ա որոշումը,

5) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի հունիսի 10-ի №8 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №258Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը,

6) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 4-ի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության №0003 և №0014 լիցենզիաների գործողության ժամկետները երկարաձգելու մասին» №155Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
24 հունիսի 2015թ.
ժամը 16[00]